

աական և վիճաբանական փաստերը կովանենք են տալիս ճեղիճակին հաստատելու, որ Գլածորի համալսարանը Թանտի վանական համալսարանի մասն է կազմել:

Արվեստագիտության դոկտոր Ն. Թահմիզյանը գեկուցում կարդաց «Գլածորի համալսարանի դերը հայկական միջնադարյան մասնագիտացված երաժշտության զարգացման մեջ» բեմայով: Գլածորի համալսարանը միջնադարյան Հայաստանի առավել կարկառուն ուսումնագիտական կենտրոններից է, որը նշանակալի դեր է խաղացել զարգացած ավատատիրության շրջանի հայկական մասնագիտացված երաժշտարվեստի ճեղաշրջման մեջ:

Ցավով Գլածորում ստեղծված և կամ համալսարանն ավարտած գրիչների ձեռքով գաղափարված երաժշտածիսական գրեթեց սակավաթիվ նմուշներ են, հասել մեզ: Բայց դրանց մեջ կա հայկական բազմադրվագ, զարդոլարուն, ծանր երգերի «ժողգրի» կամ «Մանրուսուկ» կոչված օրնակ, որն ինքնին տվյալ ժամանակն ու միջավայրը բնութագրող պերնասյուս կորով է, թե երգեցողության բարձր ոճի և թե խաղերի կատարելագործված, բարդ համակարգի կիրառման տեսակետներով:

Աղբյուրները հավաստիացնում են, որ Գլածորի համալսարանում երաժշտությանը հատկացվել է կարևոր տեղ, և ուսումնականները ներառվորություն են ունեցել կրթվելու նաև երաժշտական թեմումով:

Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Մրապյանի գեկուցումը նվիրված էր մեծ բարունակետ, Գլածորի համալսարանի հիմնադիր Եսայի Նչեցու գեղագիտական ըմբռնումներին: Ուսուցչակետը գրականության խնդիրն ու նշանակությունը գտնում էր ոչ միայն գրի ու խոսքի արվեստի միջոցով աշխարհը նանաշելի դարձնելու, այլև կյանքում ճիշտ ուղով ընթանալու առանձնահատկության մեջ: Նչեցին գրականությունը համարում էր մարդկային միտքը, վարեն ու բարբը, կենցաղն ու սովորությունը դաստիարակող, շտկող ու կազմակերպող հատուկ բնագավառ:

Իսկ գրական արվեստի մեջ Եսայի Նչեցին առաջնաներ խնդիր էր վերագրում ճարտասանությանը: Նրա կարծիքով գրողը պետք է կատարելագույն տիրակետի այդ արվեստին, որ կարողանա խորագույն օգտվել առասպելներից ու խրատկանից և ժողովրդական բանաստեղծության նմուշներից ու խոսքարվեստից, ինչպես նաև տաղաչափությունից: Մեծ ուսուցչակետը այս սակարեգում առաջնային տեղ էր հատկացնում նաև բարբառների իմացությանն ու կիրառությանը, ինչպես և ուրիշ ազգերի լեզուներին տիրակետելու հանգամանքին:

Պատմական գիտությունների թեկնածու Յ. Վարդանյանի գեկուցումը նվիրված էր Եսայի Նչեցու և նրա համախոնների՝ Հռոմի պապի փառաբանության դեմ մղած պայքարի լուսաբանմանը:

Արվեստագիտության թեկնածու Ա. Գևորգյանը գեկուցում կարդաց հայկական մանրանկարչության Նազենաձորի դպրոցի մասին: Նա նշեց, որ այդ դպրոցի բարձր մակարդակը պայմանավորված էր բուն Հայաստանի և Կիլիկիայի մանրանկարիչների ստեղծած բարձրարվեստ ծաղկողների ժառանգության ավանդույթներով: Սյունիքի մանրանկարիչներից ու գրիչներից մեզ են հասել մեծ թվով ձեռագրեր, որոնց մեջ արժեքավոր են հատկագույն Թորոս Տարանցու, Ավագի, Մամիկի, Պողոսի և Մաթևոսի աշխատությունները: Պահպանվել են նաև մի շարք անանուն նկարիչների շատ արժեքավոր գործեր:

Դածորյան մանրանկարչական արվեստին նվիրված գեկուցման ընթացքում ցուցադրվեցին ճիշտ ճեղիճակների նկարների լուսապատկերները:

Գլածորի 700-ամյա հոբելյանական նստաշրջանն անցավ գիտական բարձր մակարդակով ու իր նպաստն ունեցավ միջնադարի այդ փառավոր ուսումնական հաստատության ավանդած ժառանգության ուսումնասիրման ու գնահատման գործում:

Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԾՆԵԴՅԱՆ 175-ԱՄՅԱԿ

Մեր ժողովրդի գեղարվեստական և հասարակական մտքի զարգացման մեջ անգնահատելի է հաշատուր Արովյանի ներդրումը: Հայ նոր գրականության հիմնադիրը, մեծ լուսավորիչն ու դեմոկրատը վճռական դեր է խաղացել նաև արևելահայ գեղարվեստական լեզվի հաղթանակի մեջ, բերել ազատասիրության ու ժողովուրդների եղբայրության սպասումները: Հետևողական պայքար մղելով կղերական խավարի ու ֆեոդալական ճեղատմանության դեմ՝ նա առասպելական Պրոմեթևսի նման վառեց լույսի

ու առաջդիմության շահը, կանխգծեց Հայաստանի ազատագրության ու հայ ժողովրդի փրկության, հոգևոր ու մտավոր վերելքի ուղին: Վերջերս մեծ հանդիսավորությամբ նշվեց այդ հիրավի հզոր անճատականության, նշմարիտ հայրենասերի, ազատության ու լույսի պատգամաբերի ծննդյան 175-ամյակը:

Հոբելյանական կարևոր միջոցառումներից էր «Նաշատուր Արովյանը և ՍՄՀՄ ժողովուրդների գրականությունը» գիտական նստաշրջանը, որը համատեղ կազմակերպել էին Հայաստանը

տանի գիտությունների ակադեմիան, Հայաստանի գրողների միությունը և Երևանի պետական համալսարանը: Նստաշրջանին մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան ոչ միայն Հայաստանի, այլև Քրիլիսիից, Բավիլից, Կիևից, Վիլնյուսից, Տարսուսից, Ռիգայից և Սովետական Միության այլ քաղաքներից հրավիրված գիտնականներն ու գրական գործիչները:

Նստաշրջանը տևեց երեք օր՝ նոյեմբերի 13—15-ը: Կիսգումար նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 13-ին, Հայաստանի գրողների տանը, 14-ին կայացան մասնանյութերի նիստերը՝ Երևանի պետական համալսարանում, Վ. Յու. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում, Խ. Արավյանի անվան տուն-բանգարանում, Արավյան քաղաքում, Նաիրիի շրջկենտրոն Եղվարդ ավանում, իսկ եզրափակիչ նիստը՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում, նոյեմբերի 15-ին:

Երևանի պետական համալսարանի գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հր. Թամարյանը (Նրա խոսքը տպագրված է հանդեսիս ասյն համարում):

«Արավյանական ավանդների հետխերով» բեմայով զեկուցեց պրոֆ. Մ. Ռազյանը: Համառոտակի ներկայացնելով մեծ լուսավորչի գրական ուղին՝ նա նկատեց, որ Արավյանը որպես գրող և գեղագետ ձևավորվել է եվրոպական ու ռուսական գրական-փիլիսոփայական մտքի լավագույն ավանդների ազդեցությամբ՝ ինքն էլ բնածնծելով նոր ավանդներ, որոնք հարստացրել և հարստացնում են հայ գրականությունը ու գրական-գեղագիտական միտքը: Մեր գրականությունը և գաղափարական-գեղագիտական միտքը Արավյանը սկզբ դեպի պատմական գործազան և համաշխարհային առաջադիմության ուղին, և մեծ լուսավորչի-դեմոկրատի ավանդները անցան մեր գրականության հետագա փուլերով, հասան մինչև Ս. Զարեհ, Հովհ. Շիրազ, Պ. Սևակ՝ պահպանելով իրենց ուժը նաև մեր օրերում:

Արավյանի բոլոր ավանդների խոստացումն ու կենտրոնացումը եղավ նրա «Վերք Հայաստանին»: Ընտրելով պատմական վեպի ժանրը՝ Արավյանը գրեց ազգային վեպ՝ միանյութով ազգային ձևն ու ազգային-դեմոկրատական բովանդակությունը: «Վերք Հայաստանին» մեծապես ազդեց պատմական ու սոցիալական վեպերի ձևավորման վրա՝ գրականության գործազան հետագա ուղի ընթացումը:

Արավյանի ավանդների մեջ կարևոր է Ռուսաստանի ազատագրական դերի, հայ և ռուս ժողովուրդների միասնության ըմբռնումը, որը հեշտ օրպես մարգարեական պատգամ: Ռուսաստանի և ռուս մեծ ազգի հետ միավորվելու պատգամն էլ վճռեց հայ ժողովրդի պատմական նախադասիքը՝ նոր քովանդակություն ձեռք բե-

րելով նրա պատմության տարբեր փուլերում: Հետագա հայ գրողներն ու հասարակական գործիչները. սուսաց զեկուցողը, իրենց աչքի առաջ ունեին Արավյանի օրինակը, ոգեշնչվում էին նրա անձով ու գործով, յուրացնում նրա տեսական ժառանգությունը՝ ուղեցույց ունենալով նրա գրական սխրանքը:

«Խ. Արավյանը Մ. Նալբանդյանի զննչա-տությամբ» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Դարսեյանը վերլուծեց և զննհատեց մեծ ներափոխական-դեմոկրատի վերաբերմունքը իր նախորդի՝ մեծ լուսավորչի-դեմոկրատի նկատմամբ: Մ. Նալբանդյանը իր գործունեության վաղ շրջանում Արավյանի լուսավորական-դեմոկրատական ավանդների անմիջական շարունակողներից էր: Առաջին անգամ նա Արավյանին հիշում է մի հոդվածում՝ նվիրված իր Մոսկվայի համալսարանական ընկերոջ՝ անցյալում Արավյանի աշակերտ Գ. Գեղամյանի հիշատակին: Այդ հոդվածը տպվել էր Մոսկվայի հայկական առաջադիմական «Հյուսիսափայլ» պարբերականում (1858, № 2), որի խմբագիրն ու հրատարակիչն էր Արավյանի ընկեր և զինակից Ստ. Նազարյանը: «Հյուսիսափայլ» ամսագիրը, հանձնի նրա գլխավոր աշխատակից Մ. Նալբանդյանի, Ռուսաստանում առաջինն արտահայտվեց Խ. Արավյանի 1858 թ. լույս տեսած «Վերք Հայաստանի» վեպի մասին: Իր «Մեռելահանցուկ» վեպում («Հյուսիսափայլ, 1859, № 9») խորհրդածելով «ազգային հոգևոր կյանքը արտացոլող» գեղարվեստական մասին՝ Նալբանդյանը հանգամանորեն կանգ է առնում Արավյանի վեպի վրա՝ այն համարելով ճշմարիտ ժողովրդական գրականության նմուշ: Նալբանդյանի աշխատության մեջ «Վերք» զննհատվում է որպես այդպիսին այն պատճառով, որ նրանում մարմնավորված է ազգային ոգին, ազգի այժմյան դրությունը: «Վերքի» ժողովրդայնությունը պայմանավորված է նաև գլխավոր հերոսի՝ Աղասու, որպես ժողովրդի մարդու, հասարակ մարդկանց շահերի խիզախ պաշտպանի, կերպարի ընտրությամբ: Արավյանի վեպը ճշգրիտակալան-դեմոկրատ Մ. Նալբանդյանին ամենից առաջ գրվում էր իր հայրենասիրությամբ, ազատասիրությամբ, ճշմարիտ ժողովրդի կյանքի ճշմարտացի արտացոլմամբ և հայրենիքի նախադասգրի համար տազնապով: Այդ պատճառով էլ «Վերք Հայաստանի» պատմավեպը նրա կողմից ընկալվում էր դարաշրջանի արդիական հասարակական, քաղաքական խնդիրների դիրքերից:

«Վերք Հայաստանի» վեպի մասին իր նկատողությունները Նալբանդյանը շարունակեց Պետրոպոլիսյան ամրոցում գրած «Կրիսիս» «Սոս և Վարդիթերի» հայտնի աշխատության մեջ: Վերլուծելով Պոռչյանի վեպը՝ բնագործը բացահայտում է արավյանական ավանդների բարեբար ազդեցությունը Պոռչյանի վրա և, մասնավորապես, ժողովրդական բանահյուսության նմուտ օգտագործումը նրա կողմից:

«Վերհ Հայաստանին» Եւրոպայի հետա-
քննարկել է նաև լեզվաբանական խնդիրն է-
տեսանկյունից՝ «Վերականգնության աշխարհաբար-
լեզվի» աշխատության ստեղծման շրջանում:

Քովանդակալից էր բանասիրական գիտու-
թյունների թեկնածու, Կիևի համալսարանի հին
գրականության դասախոս, Ինժեռնյանի «Վար-
դանանք» պատմավեպի ուղբախմբերեն բարգմա-
նիչ կառավարա Ջաղարժնայի կալույթ: Երևանի
համալսարանում հայերենի մեջ հմտացած բարգ-
մանչանի վաղուց է ձեռնամուխ եղել հայ
գրականության արժեքները ուղբախմբի ընթեր-
ցողի սեփականությունը դարձնելու շնորհակալ
գործին: Հարեյական գիտական նստաշրջանի
նա ներկայացրել էր «Արավյանի երկերի ուղբախ-
մբերեն բարգմանություններ» գեկուցումով:

— Սովետական Ուկրաինայում կատարված
ամենատաղին բարգմանությունների մեջ, ա-
ռաց նա, եղել են հայ նոր գրականության հիմ-
նադիր Խաչատուր Արավյանի ստեղծագործու-
թյունները: Այդ բարգմանությունը, ինչպես և
մյուս շրջանի բազմաթիվ ուրիշ բարգմանու-
թյուններ, օժտված լինելով մի շարք արժանի-
ներով, ունեն և իր յուրահատկությունները: Ձե-
կուցողը մատնացույց արեց դրանցից առավել
կարևորները: Ժամանակը, երբ իրականացվեց
առաջին բարգմանությունը (1948), մի շարք
հանգամանքների պատճառով դեռևս չէր կարող
ապանակվել բնագրի լեզուն տիրապետող բարգ-
մանիչներով: Ուստի և այդ բարգմանություն-
ների հիմնական հատկանիշն այն է, որ նրանք
ստեղծվում էին տաղացիների հիման վրա, թեև
բարգմանություններ էին կատարում ուղբախ-
մբական սովետական գրականության նշանավոր
վարպետներ Մ. Ռիլսկին, Ա. Մալիշյան, Վ. Սաս-
յուրը, և Մերչչեկյան, Ա. Կունժիչը, Ա. Իլչեն-
կոն: Ժամանակի գործոնով է բացատրվում նաև
բարգմանությունների նկատմամբ, և դա
հասկանալի է, չէ՞ որ Խ. Արավյանի երկերի ուղ-
բախմբերեն լույս տեսնելուց հետո փոխվել է
բարգմանության տեսության ու պրակտիկայը
վիճակը, փոխվել են գեղարվեստականության
և բարգմանության ճշգրտության շափանիչները:

40-ական թթ. բարգմանության տեսությամբ
և բարգմանչական պրակտիկայով էին պայմա-
նավորված հայկական բնագրի ռեժի ու ձևի վեր-
ստեղծմանը բարգմանիչների մտեցման մը
շարք յուրահատկություններ: Ընդհանրացումնե-
րի և եզրակացությունների համար բավականա-
չափ կոյր տալիս է «Վերհ Հայաստանի» վեպի
բնագրի և բարգմանության համեմատական
հենությունը:

Ձգանքով օրհան հնարավոր է ճշգրիտ վեր-
արտադրել «Վերհի» քովանդակությունն ու գա-
ղափարները, նրա ընդհանուր տպավորությունը
բարգմանիչ Ալեքսանդր Իլչենկոն բավական հա-

նախ գեներալում է ստեղծագործության ձևը,
բաց թողնելով նույնիսկ կոմպոզիցիոն մի շարք
յուրահատկություններ: Պատճառները տարբեր
են: Ինչ խոսք, բարգմանչի կամայական վերա-
բերումները մեղադրում է, բայց այն հանգա-
մանքը, որ 19-րդ դարի առաջին կեսի հայե-
րենը, որով ստեղծվել է վեպը, և 20-րդ դարի
կեսի հայերենը, երբ կատարվել է բարգմանու-
թյունը, ունեն որոշակի անհամապատասխանու-
թյուններ, դժվարացնում է գեղարվեստական
միջոցների ընտրությունը՝ հայերեն տեխնիկ ուղ-
բախմբերեն վերարտադրելիս: Թարգմանիչը հար-
կադրված է շփվել նաև այնպիսի բաների ու
ներականական ձևերի հետ, որոնք վաղուց ար-
դեն հայերենում գործածական չեն: Ավելին. նա
պետք է դրանք ներկայացնի ուղբախմբերեն կամ
որևէ այլ լեզվով: Թարգմանչի կողմից առավել
գործածելի հնարան է համարժեքների, նմա-
նակների և փոփոխակների որոնումները, որոն-
ցով էլ նա կարողացել է վերստեղծել Արավ-
յանի հարուստ պատկերաշքին երանգապնակը:
Հայ մեծ գրողի երկերի և նրանց ուղբախմբերեն
բարգմանությունների համեմատական վերլու-
ծությունը ցույց է տալիս, որ բնագրի և բարգ-
մանչի մեծ տեխնիկ համահնչյունությունը լեզ-
վական մակարդակում խախտվում է լույ շնչին
շափով, իսկ դա չի ազդում երկի գաղափարա-
կան ուղղվածության և գեղարվեստական որակի
վրա:

Արավյանի ստեղծագործությունը մեծ հետա-
քննարկության է ներկայացնում նաև լեզվի պատ-
մաբանների համար: Համառոտակի տեղադրու-
նավ Արավյանի լեզվական հայացքներին և
հայագետների շրջանում դեռևս շարունակվող
վեճերին՝ բանասիրական գիտությունների զու-
տուր և. Պատճառները ցույց տվեց այն վերա-
բերի և անգնահատելի դերը, որ խաղացել է
Արավյանը արևելահայ նոր գրական լեզվի՝ աշ-
խարհաբարի հաղթանակի գործում:

Նստաշրջանին մասնակցում էր նաև ուկրաի-
նացի բանաստեղծ ու բարգմանիչ Վիկտոր
Կոչևսկին, որի հայերեն կալույթը ոգևորությամբ
ընդունեցին ներկաները: Նա շեղմ գնահատանքի
խոսք առաց հայ ժողովրդի և նրա պանծալը
գավակ Խ. Արավյանի մասին և բանաստեղծու-
թյուններ կարողաց հայերեն լույս տեսած իր նոր
գրքին:

«Նախատուր Արավյանը և ՍՄՄ ժողովուրդ-
ների գրականությունը» համամիութենական
գիտական նստաշրջանը մեծ գրողի ու մանկա-
վարժի, լուսավորչ-դեմոկրատի, պայծառ հայ-
րենասերի հիշատակին նվիրված գրական տոն
էր, հայ գրականության մեծ տոներից մեկը: